Կոմիտասյան օրեր

1. *Թեման*

Կոմիտաս, կոմիտասյան օրեր

2. *Մասնակիցների, սովորողների տարիքային խումբը*

Նախակրթարան
Կրտսեր դպրոց
Միջին դպրոց
Ավագ դպրոց

3. *Աշխատանքների ծավալը և ժամանակացույցը*

Նախագծի իրականացումը նախատեսվում է օգոստոսի վերջին շաբաթից: Ամփոփվում է սեպտեմբերի 24-29-ին, բայց շարունակական է:

4. *Աշխատանքների ընթացքը, նպատակը, խնդիրներն ու արդյունքները*

Նախագծի նպատակը

- ✓ սովորողների երաժշտական կրթում,
- ✓ նրանց մոտ երաժշտական մշակույթի ձևավորում:

Խնդիրները

- ✓ սովորողներին ներկայացնել բարձրաճաշակ երաժշտություն, որը կնպաստի նրանց գեղագիտական ճաշակի ձևավորմանը,
- ✓ երաժշտության միջոցով հաղորդակից դարձնել ազգի մշակույթին, նպաստել դրա յուրացմանը,
- ✓ երաժշտական մտածողության ձևավորում և զարգացում,
- ✓ հոգևոր զարգացում,
- ✓ ազգային, հոգևոր նյութի յուրացում,
- ✓ գեղարվեստական մտածողության ձևավորում և զարգացում,
- ✓ ընդհանուր զարգացման ապահովում,
- ✓ ստեղծագործական երևակայության զարգացում,
- ✓ երգի ուսուցման և կատարման միջոցով
  - երաժշտական ունակությունների զարգացում,
  - երգի կատարողական գրագիտության և կուլտուրայի մշակում,

- երգի կերպարային զգացողություն,
- ճաշակի ձևավորում:

Ընթացքը

➢ *Նյութի ընտրություն*

✓ կյանքն ու գործունեությունը,
✓ Կոմիտասը որպես ազգագրագետ,
✓ ուսուցման և կատարման համար նախատեսված ստեղծագործությունները՝ ինչպես ըստ տարիքային խմբերի, այնպես էլ ընդհանուր կատարման համար,
✓ ունկնդրման համար նախատեսված ստեղծագործություններ.
- խմբերգեր,
- մեներգեր,
- դաշնամուրային ստեղծագործություններ,
- մշակումներ լարային քառյակի և այլ կազմերի համար,
- ծրագրային երգեր,
- Կոմիտասի կատարումները,
✓ նամակները, բանաստեղծությունները, հայտնի մարդկանց հուշերը:

➢ *Սովորողների հետ տարվող աշխատանքը*

✓ երգերի ուսուցում, կատարում,
✓ ունկնդրում,
✓ համապատասխան ուսումնական նյութերի ստեղծում՝ սովորողների համար, սովորողների կողմից (ցուցադրության համար նախատեսված նյութեր, տեսանյութ, ֆիլմ, կարաոկե, այլ նյութեր),
✓ մայրենիի ինտեգրում՝ տպավորություն, կարծիք, պատում և այլն:

Հետազոտական աշխատանք

Սովորողները ինքնուրույն կամ մեծերի օգնությամբ տեսագրում, ձայնագրում են իրենց շրջապատի Կոմիտասի ստեղծագործություններն իմացող, կատարող անձանց: Աշխատանքի կատարման արդյունքում պարզում են՝ ինչքանով են Կոմիտասի ստեղծագործություններն հայտնի, ճի՞շտ են կատարվում, իրենց շրջապատող մարդիկ գիտե՞ն Կոմիտասի դերն ու արժեքը:

Աղբյուրները՝ համացանց (www.komitas.am, www.youtube.com , այլ կայքեր), գրականություն:

Նյութի բաշխում՝ ըստ մասնակիցների, սովորողների տարիքային խմբերի

Երգեր

Նախակրթարան

1. Փայտե ձիուկ
2. Արև, արև, եկ, եկ
3. Եղնիկ (5տարեկաններ)

Կրտսեր դպրոց

1. Փայտե ձիուկ
2. Արև, արև, եկ, եկ
3. Եղնիկ
4. Կաքավիկ
5. Քելե, քելե

Միջին և ավագ դպրոց

1. Շողեր ջան
2. Անձրև եկավ
3. Երկինքն ամպել է
4. Հո՜յ, Նազան
5. Ալագյազ
6. Ալ այլուղս
7. Երևան բաղ եմ արել
8. Էս առուն
9. Տեր, ողորմեա
10. Ազգային օրհներգ

Միջին և ավագ դպրոցների համար նախատեսած երգացանկի երգերից մեկ ամսում կարող են ուսուցանվել 3-ից 4 երգ (շաբաթական մեկ դասաժամ), կան արդեն ուսուցանված երգեր, որոնք կրկնում են: Մյուսներն ուսուցանվում են հոկտեմբեր ամսվա ընթացքում:

Ունկնդրում

Նախակրթարան

Կոմիտասի երգերից

- ✓ Կաքավիկ
- ✓ Քելե, քելե
- ✓ Հո՜յ, Նազան

Կոմիտասի անվան լարային քառյակի կատարումներից

- ✓ Կաքավիկ
- ✓ Ալ այլուղս
- ✓ Քելե, քելե
- ✓ Հո՜յ, Նազան

Կրտսեր դպրոց

Կոմիտասի երգերից

- ✓ Կաքավիկ
- ✓ Քելե, քելե
- ✓ Հո՜յ, Նազան

Կոմիտասի անվան լարային քառյակի կատարումներից

- ✓ Կաքավիկ
- ✓ Հաբրբան
- ✓ Ալ այլուղս
- ✓ Վաղարշապատի պարը
- ✓ Քելե, քելե
- ✓ Հո՜յ, Նազան

Դաշնամուրային ստեղծագործություններ

- ✓ Շուշիկի
- ✓ Երկինքն ամպել է
- ✓ Հաբրբան
- ✓ Կաքավիկ

Խմբերգեր

- ✓ Սոնա յար
- ✓ Զար զընգը
- ✓ Անձրև եկավ
- ✓ Էս առուն
- ✓ Իլիլի, դիլիլի

Միջին և Ավագ դպրոցներ

Կրտսեր դպրոցի համար նախատեսված ստեղծագործությունները, ինչպես նաև.

Կոմիտասի երգերից

- ✓ Արմենակ Շահմուրադյանի կոմիտասյան երգերի կատարումներ
- ✓ Կոմիտասի կատարումները
- ✓ Այլ երգիչների կատարումներ

Դաշնամուրային ստեղծագործություններ

- ✓ Վաղարշապատի պարը
- ✓ Երկինքն ամպել ա
- ✓ Չինար ես
- ✓ Գարուն ա
- ✓ Չեմ կրնա խաղա
- ✓ Ծիրանի ծառ

Խմբերգեր

- ✓ Սարերի վըրով գնաց
- ✓ Յարն անուշ
- ✓ Ալագյազ
- ✓ Հով արեք
- ✓ Էս գիշեր
- ✓ Հարսանեկան երգերի շարան, 1
- ✓ Հարսանեկան երգերի շարան, 2
- ✓ Քելեր, ցոլեր
- ✓ Չինար ես
- ✓ Ազգային օրհներգ

Ուսումնական ճամփորդություն

- ✓ Կոմիտասի անվան պանթեոն,
- ✓ Կոմիտասի ստեղծագործություններով կազմված համերգների՝ Երևանի համերգասրահներում,
- ✓ Կրթահամալիրի Համերգասրահում կազմակերպված Կոմիտասի ստեղծագործություններից կազմված համերգի մասնակցություն:

Ձայնասկավառակի ստեղծում

Կոմիտասն ունի ձայնագրած՝ նոտագրած հայկական ժողովրդական երգեր, որոնց կենդանի կատարումները չկան: Առաջարկում ենք տարվա ընթացքում Կրթահամալիրի ձայնագրման ստուդիայում երաժիշտ կատարողների օգնությամբ ձայնագրել: Այդ ձայնագրությունները կլինեն ունկնդրման նյութեր, կհամալրեն

Կոմիտասի ձայնադարանը և կտեղադրվեն Կրթահամալիրի «Ձայնադարան» բաժնում:
Աշխատակազմի անդամներ.

1. Հարություն Թոփիկյան
2. Մարինե Մկրտչյան
3. Սոֆյա Գրիգորյան
4. Սեյրան Ավագյան
5. Տաթև Ստեփանյան
6. Գագիկ Հարությունյան

Աշխատանքի ընթացքում կարող են ներգրավվել այլ երգիչ կատարողներ:

Կոմիտասյան օրեր Վայոց ձորում

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Կոմիտասյան օրեր Վայոց ձորում

2013թ. սեպտեմբերի 28-29

Նախագիծ

Մասնակիցները՝ «Սեբաստացիներ» ուսուցչական երգչախումբ, կինո-ֆոտո ակումբ, «Երաժշտական լաբորատորիա» ակումբ, TV mskh

Սեպտեմբերի 28
8.00 – մեկնում Երևանի Սուրբ Երրորդություն եկեղեցուց
10.30 – հոգևոր երգեր Արենիի եկեղեցում
12.00 – հոգևոր երգեր Նորավանքում
13.00 – հաղորդություն, հյուրասիրություն
14.00 – հոգևոր երգեր Մալիշկայի եկեղեցում
15.00 – հոգևոր երգեր Գլաձորի Սուրբ Խաչ եկեղեցում
16.00 – հոգևոր երգեր Թանահատում
18.00 – համերգ Եղեգնաձորի մշակույթի պալատում
Գիշերակացը Եղեգիսի կիրճում՝ ճամբարում (սովորողներ), Եղեգնաձորի հյուրանոցում (ուսուցչական երգչախումբ):

Սեպտեմբերի 29
10.00 – հոգևոր երգեր Ցախաց քարում
12.00 – տոնախմբություն Սելիմի քարավանատան բակում
13.00 – հոգևոր երգեր Գեղհովիտի հին գերեզմանատան եկեղեցում
հաղորդություն, հյուրասիրություն
16.00 – հանդիպում Վազգենյան դպրանոցում

հոգևոր երգեր Սևանի թերակղզու եկեղեցում
տոնախմբություն Վազգենյան դպրանոցում. ծանոթություն դպրանոցին, նվիրատվություն
19.00 – մեկնում Երևան

Աջակցությամբ՝ ՀՀ Պաշտպանության նախարարության, Վայոց ձորի մարզպետարանի, Հայ առաքելական եկեղեցու Վայոց ձորի թեմի, «Սեբաստացներ» կրթական հիմնադրամի

Առաջարկվող գրականություն

- ✓ Կոմիտասի հատորները,
- ✓ Կոմիտասի նամակները,
- ✓ Կոմիտասի բանաստեղծությունները,
- ✓ Կոմիտասի մասին գրված գրականություն:

Արդյունքները

Սովորողը կիմանա

- ✓ Կոմիտասի ստեղծած, գրի առած և մշակած հայկական ժողովրդական երգերը,
- ✓ Կոմիտասի ստեղծագործությունները՝ վոկալ, դաշնամուրի համար գրված, խմբերգերը,
- ✓ Կոմիտասի անվան լարային քառյակի կատարմամբ Կոմիտասի գրի առած և հորինած ստեղծագործությունները:

Սովորողը կլինի

- ✓ Կոմիտասի երգերը իմացող, փոխանցող, տարածող:

Սովորողը կկարողանա

- երգել մաքուր ինտոնացիայով, վոկալ ճիշտ շնչառությամբ,
- համացանցից (www.komitas.am, www.youtube.com , այլ կայքեր), և այլ աղբյուրներից ինքնուրույն գտնել անհրաժեշտ նյութեր:

Սովորողների և դասավանդողների ստացած արդյունքների ներկայացումը կայքում, բլոգում, ձայնադարանում

Կոմիտասյան օրերին, կրթահամալիրի տարբեր դպրոցների տարբեր խմբեր, որոնք ուսումնական նախագծի շրջանակներում նախապես պատրաստվել են, ելույթներով հանդես կգան Հայաստանի տարբեր մարզերում, մասնավորապես՝ մշակութային կենտրոններում և եկեղեցիներում: Սա իրենից կարող է ներկայացնել յուրահատուկ կենսամշակութային արշավների շարք: Այն հնարավորություն կտա տարածել Կոմիտաս արժեքը, ինչը դրված է այս նախագծի հիմքում: Այն ընձեռում է նաև հնարավորություն այս համատեքստում էլ ավելի ճանաչելի դարձնել կրթահամալիրը և իրականացվող նախագծերն ու ծրագրերը: